ՀՀ Գեղարքունիքի մարզպետ,
պրն Կարեն Սարգսյանին
քաղ. Արման Ալեքսանդրի
Ավետյանից
ID: 011880440
ք. Երևան, Նոր-Նորք, Հովհաննիսյան 24/1 շ., բն. 45
Arman10.5@mail.ru
Հեռ. 093 581 561

Տեղեկություն ստանալու դիմում

Հարգելի պարոն Սարգսյան,

Ես՝ Արման Ալեքսանդրի Ավետյանս, հայցում եմ Ձեր աջակցությունը հետևյալ հարցում.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ *տրամադրել Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքում գարնանացան գարու բերքատվության վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ վերջին 10 տարիների*:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ և կանխավ շնորհակալ եմ տեղեկություն ստանալու հարցումիս օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պատասխանելու համար:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի/պաշտոնատար անձի կամ կազմակերպության տվյալները, որին կարող եմ ուղղել հարցումը:

Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման և տրամադրման ծախսերը: Կից ներկայացնում եմ անձանագրիս լուսանկարը:

Կանխավ շնորհակալ եմ ցուցաբերված աջակցության, պատշաճ, ամբողջական և շուտափույթ պատասխանի համար: Խնդրում եմ պատասխանը տրամադրել էլեկտրոնային տարբերակով՝ նշածս էլ. հասցեով:

Դիմող՝ Ա. Ավետյան

20 նոյեմբերի, 2023 թ.